

# Ժամանակ



## Պետք է սկսել գոհաբերել խոշոր կոռուպցիոներներին

14:20 Yerevan | 10:20 GMT | Sunday 31 January 2010

Հեղինակ՝ Մանուկյան

**«Երբ պետական միջոցների նկատմամբ ոտնձգություն է կատարվում, այն պետք է անպայման համարենք ոտնձգություն նաև մեր գալիք սերունդների նկատմամբ: Շատ հարցերում կարելի է պաշտոնյաների նկատմամբ ներողամիտ լինել, բայց պետական միջոցներին ձեռք գցած պաշտոնյան պետք է լինի ամենից զզվելի մարդը մեր հանրության մեջ»:**

Վերահսկիչ պալատի անձնակազմի հետ հանդիպման ժամանակ Սերժ Սարգսյանի արած այս զիլ հայտարարությունը փշաքաղեցրեց: Իսկ թե ինչ արդյունք է արձանագրում մեր երկում այդ զզվելի երեւոյթի դեմ պայքարն իրականում՝ վկայում են մեր երկրի մասին միջազգային կազմակերպությունների հետազոտությունները: Մասնավորապես՝ ամերիկյան Heritage Foundation կազմակերպության եւ Wall Street Journal պարբերականի՝ ամենամյա տնտեսական ազատությունների համաթվի վերաբերյալ զեկույցի հրապարակած տվյալներով Հայաստանը 69.2 արժեքով 179 երկրների շարքում զբաղեցնում է 38-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա համեմատ 0.7 միավորով նահանջելով 7 հորիզոնականով: Ընդհանուր համաթվից կոռուպցիայի բաղադրիչի շեղման արժեքով Հայաստանը գրավում է երկրորդ տեղը (40.2)՝ զիջելով միայն Ղրղզստանին: Հիշյալ զեկույցում նշված է, որ կոռուպցիան ՀՀ-ում լայնորեն տարածված է բոլոր մակարդակներում ու ոլորտներում, եւ պետական պաշտոնյաների կողմից կաշառքի պահանջը ընկալվում է որպես սովորական երեւոյթ:

Իսկ հեղինակավոր մեկ այլ կազմակերպության՝ Freedom House-ի այս տարվա հունվարի 12-ին հրապարակած «Ազատությունն աշխարհում 2010թ.» զեկույցում Հայաստանն արդեն 8 տարի շարունակ առաջընթաց չի արձանագրում ժողովրդավարության զարգացման ուղղությամբ՝ դասվելով մասամբ ազատ երկրների շարքը՝ քաղաքական իրավունքների եւ քաղաքացիական ազատությունների սահմանափակ պահպանմամբ՝ կոռուպցիայի, իրավունքի թույլ գերակայության պայմաններում, ուր տիրապետող է «Մեկ կուսակցություն՝ սահմանափակ բազմակարծություն» մոդելը:

Այսպիսի ցուցանիշներ արձանագրած մեր երկիրը, որը ժողովրդավարությունը գերակայություն է հռչակել բոլոր ոլորտներում, նմանվում է 70-ականների խունտաներին (Արգենտինա, Չիլի, Բրազիլիա, Ուրուգվայ, Բոլիվիա, Պերու): Այդ երկրների մեծ մասը ներկայումս նույն հեղինակավոր կազմակերպությունների անցկացրած ուսումնասիրությունների տվյալներով ազատ երկրներ են, իսկ մյուսները՝ մասամբ ազատ, ընդ որում՝ շատ ավելի լավ վիճակում, քան

Թե Հայաստանը: Հայաստանը, մինչդեռ, ձգտում է խունտիզմի ու ավելի է փորձում բյուրեղանալ այդ ոլորտում:

Եվ ամենավերջին ու թարմ օրինակը՝ ԵԽԽՎ ձևեռային նստաշրջանում տեղի ունեցած դատական համակարգում կոռուպցիայի վերաբերյալ զեկույցում ՀՀ դատական համակարգը համարվել է ամենակոռումպացվածը: Մի հավելում էլ. 2009-ի հունիսի 10-ին «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի տնօրենների խորհուրդը որոշում կայացրեց դադարեցնել հայաստանյան ծրագրի 67, 1 մլն դոլար արժողությամբ ճանապարհաշինական ենթածրագրի ֆինանսավորումը՝ ահա այսպիսի պատճառաբանությամբ. «Այս որոշման պատասխանատվությունը կրում է Հայաստանի կառավարությունը, որի գործողությունները չեն համապատասխանել ծրագրի շարունակական մասնակցության համար անհրաժեշտ ցուցիչներին»: Կարճ ասած՝ հատել են կառումպացված լինելու թույլատրելի սահմանը:

«Վիճակն անմխիթար է»

Այս գնահատականն էլ՝ մեր երկրում կոռուպցիայի ներկա վիճակի վերաբերյալ՝ հակակոռուպցիոն Transparency International հ/կ նախագահ Ամալյա Կոստանյանին է, ով հիշեցրեց հայրենի պաշտոնյաներից մեկի՝ կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրն արած այն հայտարարությունը, թե «կոռուպցիան նույնիսկ անհրաժեշտ է մեր երկրին»: «Մարդիկ այսպես են մտածում, որ կոռուպցիան մի մասն է մեր մենթալիտետի, իսկ դա սարսափելի է», - նկատեց տկն Կոստանյանը՝ հավելելով. «Կարծում եմ՝ չկան ազգեր, որոնք դատապարտված են կոռումպացված մնալու, եւ հուսով եմ, որ հայ ազգն էլ այդ ազգերից չէ»: Transparency International-ը շուրջ 10 տարի է, ինչ գործունեություն է ծավալում մեր երկրում, եւ անցած 10 տարիների ընթացքում, մեր գրուցակցի հավաստմամբ, այդպես էլ տեսանելի չեն դառնում կոռուպցիայի հաղթահարման ուղղությամբ միտումները. կոռուպցիան ամենուր է եւ նվազելու փոխարեն՝ փթթում է: Եվ որ ամենասարսափելին է՝ մեզանում կոռուպցիայի դրսևորումներից ամենատարածվածը քաղաքական կոռուպցիան է, «որին ականատես ենք լինում ամեն հերթական խայտառակ ընտրությունների ժամանակ»: Իսկ ի՞նչն է պատճառը՝ հակակոռուպցիոն կազմակերպությունների թերացումը, պետական ապարատի վատ աշխատանքը, թե՞ խնդիրը հասարակական գիտակցության մեջ է, որն այդպես էլ չի համակերպվում այն մտքի հետ, որ «հարց լուծելու» համար պետք է դիմել օրենքին, այլ ոչ թե կաշառատվությանը: «Բոլորս ունենք մեղքի մեր բաժինը, եւ շատ-շատ գործոններ նպաստում են նրան, որ մեր երկրում կոռուպցիայով զբաղվելը ամոթալի չէ», - ասաց Կոստանյանը՝ նկատելով, որ թեեւ ունենք բավարար օրենսդրություն՝ կոռուպցիայի դեմ պայքարելու համար, սակայն այն չի կիրառվում, քանի որ ՀՀ արդարադատության համակարգը չի պաշտպանում հանրության շահերը: «Այդ դեպքում սպասումներ ունենալ, որ պետության կողմից տարվող պայքարը արդյունավետ կլինի՝ անլուրջ է, քանի որ համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ երբ ամբողջ համակարգն է վարակված կոռուպցիայով, ապա համակարգային կոռուպցիայի դեմ պետք է պայքարել համակարգային մեթոդներով՝ վերելից ներքեւ, աջից ձախ եւ հնարավոր բոլոր ուղղություններով»: Մինչդեռ մեր երկրում ընթանում է մանր կոռուպցիոնների որս, իսկ կառավարման համակարգի բարձր օղակներում եղած խոշոր կոռուպցիոնները մնում են ստվերում, խրախուսում կոռուպցիան՝ իրենց գործունեությամբ քայքայելով պետական բոլոր ինստիտուտները: Տկն Կոստանյանը վկայաբերեց նախկինում խիստ կոռումպացված երկրներից մի քանիսի, մասնավորապես՝ Մինգապուրի օրինակը, որտեղ այսօր «դարի չարիքը» նկատելի նվազել է, քանի որ դրա դեմ պետությունը սկսեց համակարգային պայքար տանել: «Այդ երկրում հասկացան, որ իրավիճակը սահմանային է, եւ փրկվելու միակ ճանապարհն ինքնամաքրվելն է: Ու գնացին ռադիկալ քայլերի՝ առաջին հերթին «գոհաբերելով» խոշոր կոռուպցիոններին»: Այս պրակտիկայի կիրառումը խիստ ակտուալ է նաեւ մեր երկրում՝ նկատի ունենալով կոռուպցիայի հարաճուն մակարդակը: «Քանի դեռ մեզանում էլ չեն եղել նման գոհաբերություններ, կոռուպցիայի դեմ տարվող պայքարը իմիտացիա է լինելու», - ասաց Կոստանյանը: Եվ որպես առաջնահերթ եւ արդյունավետ անելիք՝ նշեց ազատ, արդար ընտրությունների անցկացումը: Քանի որ միայն այդպիսի ընտրությունների միջոցով ձեւավորված մարմիններն են, որ կաշկանդված չլինելով կոռուպցիայի շղթաներով, ի վիճակի կլինեն իրական պայքար տանել այդ չարիքի դեմ: